ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 սեպտեմբերի 2024 թվականի թիվ 246 – Լ

## ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՆՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի N 1043-Ն որոշման հավելվածի 4-րդ, 30-րդ և 31-րդ կետերի պահանջների կատարումը՝

Որոշում եմ

1. Հաստատել բնակարանների գնման վկայագրի ձևը՝ համաձայն Հավելվածի:
2. Հաստատել բնակարանների գնման վկայագրերի սերիան ՏՎ՝ ըստ Տավուշի մարզային նոտարական տարածքի:
3. Սահմանել, որ

   1) բնակարանների գնման վկայագրի կորստի դեպքում Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմը, շահառուի գրավոր դիմումի հիման վրա, տրամադրում է բնակարանների գնման վկայագրի կրկնօրինակը, որը պարունակում է «Կրկնօրինակ» գրառումը: Դիմումը, որով պարզաբանվում են բնակարանների գնման վկայագրի կորստի պատճառները և հանգամանքները, շարադրվում է ազատ ձևով.

   2) բնակարանների գնման վկայագրի կրկնօրինակը Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմի կողմից տրամադրվում է դիմումը Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի աշխատակազմ մուտքագրելու օրվանից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում:
4. Սահմանել, որ բնակարանների գնման վկայագրի հերթական համարը կազմված է հինգ նիշից, որտեղ առաջին երկու նիշը ընթացիկ տարեթվի վերջին երկու նիշերն են:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2024-09-18 09:37:06 GMT-4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ք. Իջևան
17 սեպտեմբերի 2024թ.

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

**ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՆՄԱՆ ՎԿԱՅԱԳՐԻ**

## ԿՏՐՈՆ № ____________

______________________________________
*վկայագիրը ստացողի անունը, ազգանունը, հայրանունը և ծննդյան տարեթիվը*

______________________________________
*անձը հաստատող փաստաթղթի սերիան և համարը*

______________________________________
*տրամադրվող աջակցության չափը ՀՀ դրամով (թվերով)*

______________________________________
*տրամադրվող աջակցության չափը ՀՀ դրամով (տառերով)*

« » ______________ 2024թ.
*վկայագրի տրամադրման ամսաթիվը*

« » ______________ 2025թ.
*վկայագրի գործողության վերջնաժամկետը*

______________________________________
*վկայագրի տրամադրման հիմնավորում ՀՀ Տավուշի մարզպետի որոշման համարը և ամսաթիվը*

*ՀՀ Տավուշի մարզպետ* ______________
*ստորագրություն*

*Կ.Տ.*

*Վկայագիրը ստացող անձ* ______________
*ստորագրություն*

---

*Հավելված 1*
*ՀՀ Տավուշի մարզպետի*
*__ __ 2024թ. համար N -Լ որոշման*

# ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

## ԲՆԱԿԱՐԱՆԻ ԳՆՄԱՆ ՎԿԱՅԱԳԻՐ № ________

______________________________________
*վկայագիրը ստացողի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարեթիվը և վայրը*

______________________________________
*անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը, տրման ամսաթիվը, ում կողմից է տրված*

______________________________________
*տրամադրվող աջակցության չափը ՀՀ դրամով (թվերով և տառերով)*

« » ______________ 2024թ.
*վկայագրի տրամադրման ամսաթիվը*

« » ______________ 2024թ.
*վկայագրի գործողության վերջնաժամկետը*

*ՀՀ Տավուշի մարզպետ* ______________
*ստորագրություն*

*Կ.Տ.*

*Տրված է մեկ օրինակից*

Սույն բնակարանի գնման վկայագիրը արժեթուղթ չէ և ենթակա չէ օտարման, գրավադրման, բռնագանձման կամ այլ անձի փոխանցման: